

ԳԼՈՒԽ Ի ԵՐԶԱՆԻԿ ՄԱՐԴ

Գարուն եկաւ, բնութիւն բոլոր զուարթացաւ, բայց դարձեալ Յայաստան կուլար: Թշնամին, որ որջացեալ էր Յայոց մայրաքաղաքը Դուին, կը պատրաստուէր ելնել դէպ հիւսիս եւ արեւելք, որպէսզի երկիր մը՝ թիզ մը հող չի մնայ անթաց արցունքէ եւ արիւնէ: Իզուր երկրագործը կը պատրաստէր իր աշխատանքը, իզուր վաճառականը կը կապէր իր կարաւանը, դարձեալ ամէն սիրտ ահ ու դողի մէջ էր, ոչ ոք վաղուին վստահութիւն ունէր, ինչպէս ամառուան օր մը պայծառ արեւ եւ երկինք՝ տերեւ չի շարժիլ, բնութիւնը բոլոր լռութեան մէջ կսպասէ, կը գուշակէ փոթորիկը, որ կը հասնի որոտալով, փայլակ, կայծակ, հողմ, հեղեղ թափելով ամէն կողմէ, Նոյնպէս ամէն ոք կը սպասէր փոթորկին:

Թէպէտ ամբողջ երկիրը կը զգար այս ամէնը, բայց քան զամէն ոք՝ աւելի կը զգար մարդ մը, որ ամէն քան կը տեսներ, ամէն քան կ'իմանար, երկրին ո՞ր կողմը ինչ անցք որ անցներ կը տեղեկանար, որ կը զգար Նաեւ թէ սոսկալի պատասխանատուութիւն մը իւր վրայ կը ծանրանար: Այս մարդը Սմբատ Սպարապետն էր, քաջ, խելօք պատերազմի մէջ վտանգը տեսնելու համար, ագահ իր եղբարց եւ ազգին արեան, վախցող անիրաւութենէ, վասնզի կը վախնար հաստուծոյ, եւ սոսկումով կը տեսներ թէ մտէր էր այնպիսի ճամփու մէջ, որուն ելքը զինք գահավեժներէ հանդունդս կը տանէր: Ինք, ստեղծուած պատերազմելու օտարին եւ Բուղայի դէմ, կը տեսներ զինք դատապարտուած Նորա անգուր ձեռքին մէջ անիրաւութեան եւ մատնութեան գործիք մը լինելու: Կը լսէր, կ'իմանար թէ Բաղդատ հայոց իշխանաց մեծ մասը Բագարատայ իւր եղբօր օրինակին հետեւելով՝ կուրանային հայրենի հաւատքը ազատելու համար քանտէ, տանջանքէ եւ մահուանէ: Կ'իմանար թէ պակսած զօրաց տեղ Բուղայի Նոր օգնութիւն կը հասներ հասորեստանէ: Որդուոյն Նամակը, որ կաթողիկոսին մահը եւ Բուղայի զինքն ուզելը կ'իմացներ՝ դառնութեամբ լցուցեր էր սիրտը: Մահուան երկիւղը հազար անգամ աւելի սիրելի էր իրեն քան թէ այդ բռնաւորին երեսը